



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1  
U-24



01 JUL 2009 MUL AS





24 JUN 2013

830

215

42

Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆ

1

Մ-24

և


# ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹԻ

## ԽՆԴԻՐԸ

### ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

1002  
7935

Մասենագրական հետազոտություն



«Ուսումնասիրություն Դաիթ Հարբացի փիլիսոփային վերագրուած իմաստասիրական երկերի»

(Արսւսյ. «Արարւս» ամսագրից, 1904, փետր., յունիս, յուլիս.)

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1904



ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԴԱԻԹ ՀԱՐՔԱՅԻ ՓԻԼՍՈՓԱՅԻՆ  
ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ

§1. Դարի մասին նախկին հետազոտողները.

Պորփիրի Ներածութեան և Արիստոտէլի "Οργανον"-ի թարգմանութիւններն ու մեկնութիւնները, ինչպէս և Սահմանը Իմաստասիրութեան հմտալից գրուածքը՝ Հայոց մատենագրական աւանդութիւնը վերագրում է Դաւիթ Հարքացի փիլիսոփային: Մինչև այժմ հայ բանասէրներից ոչ ոք չէ զբաղուել այդ երկերի մանրամասն ուսումնասիրութեան խնդրով: Իսկ օտարազգի հայագէտ բանասէրների աշխատութիւններից ինձ յայտնի են միմիայն C. F. Neumann-ի և F. C. Conybeare-ի հետեւեալ հետազոտութիւնները—1. C. F. Neumann, Mémoire sur la vie et les ouvrages de Davide, philosophe arménien ... Journ. Asiat., III, Paris 1829, p. 46—86, 97—153. 2. C. F. Conybeare, Anecdota Oxoniensia, A collation with ancient Armenian Versions of the greek text of Aristotle's Categories etc. Oxford 1892, 4<sup>o</sup>, pp. XXXVIII+182. Սոյն աշխատութեան Յառաջաբանը Հ. Յ. Տաշեանի թարգմանութեամբ՝ «Քննութիւնը Դրոց Դաւիթ Անյաղթի», Վիեննա 1893, 8<sup>o</sup>, էջը 92:



§2. Ը. Կոնիբիլի կարծիք

Ուսուցչապետ Պ. Կոնիբիլը «Ստորոգութիւնը և «Յաղագս մեկնութեան» գրոց հայերէն մեկնութիւնները

Дозволено цензурою 8 июня 1904 г. г. Тифлисеь.





համարում է թարգմանութիւն յունարէնից<sup>1)</sup>, բայց տարբեր յունարէն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* մեկնութիւններից<sup>2)</sup>: Մեծարգոյ Փ. Կոնիբերի կարծիքով՝ այդ մեկնութիւնները շարադրուած են եղել յատկապէս հայ անձանց կրթութեան համար որևէ հայի ձեռքով, որը կարող էր այդ մեկնութիւնները յունարէն գրած լինել և ապա հայերէն թարգմանած<sup>3)</sup>, և այդ հեղինակն ու թարգմանը հաւանօրէն Պրոհերեսիոս յայտնի հայ հռետորն է եղել<sup>4)</sup>: Այս վերջին ենթադրութիւնը բոլորովին անընդունելի է նախ այն պատճառով, որ Պրոհերեսիոսի ժամանակ IV-րդ դարում հայերէն գիր և դպրութիւն դեռևս գոյութիւն չունէր:

Սահմանք Իմաստասիրութեան գրուածքը<sup>5)</sup> և Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը մեծ. Փ. Կոնիբեր վերագրում է Դաւիթ փիլիսոփային և համարում է թարգմանութիւն յունարէնից: Արիստոտէլի Վերլուծականքի հայերէն մեկնութեան 14 գլուխ հատուածը պր. Փ. Կոնիբեր ընդարձակ քննութեան չէ ենթարկում, այլ յիշելով այդ երկը, առանց որոշ պատճառաբանութիւնների, աւելացնում է իւր կողմից միայն այսքանը՝ որ «այդ թարգմանութիւնը կատարուած է յունարէն մի մեկնութեան ընադրից, որը ըստ երևոյթին գրուած է եղել նոյն Դաւիթից IV-րդ կամ V-րդ դարում<sup>6)</sup>»:

Ե՞րբ է ապրել Դաւիթ փիլիսոփան, ո՞վ է յունարէնից թարգմանել վերոյիշեալ երկերը՝ այդ մասին յարգելի ուսուցչապետը միայն ենթադրութիւններ է անում. բայց որևէ հաստատուն եզրակացութեան չէ գալիս:

1) *Sto. Anecd. Oxon.*, § 14, էջ XVIII-XIX.

2) *Sto. նոյնը* § 20, էջ XXII.

3) *Sto. նոյնը* § 16 և 17, էջ XX-XXI.

4) *Sto. նոյնը* § 18, էջ XXI-XXII.

5) Յունարէնի վերնագիրն է՝ *Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας, ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφρονος φιλοσόφου.*

6) *Sto. Anecd. Oxon.* § 9, էջ VIII, § 30 և 31, էջ XXXVI, XXXVII:

§ 3. Բանասիրական ուսումնասիրութեան ո՞ր եղանակով կարելի է հաստատուն եզրակացութիւններ ստանալ.

Ինչպէս Փ. Կոնիբեր, նոյնպէս և ուրիշ հայագէտ բանասէրներ՝ աշխատել են պարզել Դաւիթի և նրան վերագրած երկերի վերաբերեալ հարցերը, քննելով գլխաւորապէս հին մատենագիրների տուած վկայութիւնները, պատմական աւանդութիւնը, էական գրքի յայտնի յիշատակարանը, երկերի ոճը ևն, և ոչոք չէ փորձել այդ հարցերի լուծումը բնական ճանապարհով գտնելու, այն է՝ Դաւիթին վերագրած երկերի բովանդակութեան մանրազննին քննութեան միջոցով: Իսկ բանասիրական ուսումնասիրութեան այդ ապահով ճանապարհով ամենայն դիւրութեամբ լուծուած են մի քանի մութ խնդիրներ, և այնպիսի հետեւութիւններ են ստացուած, որոնք շատ կէտերում միանգամայն տարբեր են տիրող ենթադրութիւններից: Դժբախտաբար՝ ձեռքի տակ չունէինք յունարէն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* մեկնութիւնները և *Προλεγόμενα*-ն, որոնց քննութիւնն ու համեմատութիւնը թերևս աւելի պարզէր Դաւիթի առեղծուածը:

§ 4. Սահմանք Իմաստասիրութեան, Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը եւ Արիստոտէլի Վերլուծականքի մեկնութեան հասուածը միեւնոյն հեղինակի՝ Դաւիթի փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» եւ «Ստորոգութեանց» հայերէն մեկնութիւնները Դաւիթին չեն.

Մեծ. ուսուցչապետ Փ. Կոնիբեր իւր վերոյիշեալ աշխատասիրութեան մէջ արդէն ցոյց է տուել, որ Յաղագս Մեկնութեան և Ստորոգութեանց հայերէն մեկնութիւնները տարբեր են յունարէն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* համապատասխան մեկնութիւններից, մինչդեռ Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը նոյն է յունարէն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ*



համապատասխան մեկնութեան հետ: Այդ մասին կարևոր ենք համարում մէջ բերել մի քանի փաստեր ևս, որոնք ստացուում են այդ երկերի մանրամասն քննութիւնից: Ինչպէս յայտնի է, Սահմանք Իմաստասիրութեան երկը և Պորփիրի Ներածութեան ու Արիստոտէլի Վերլուծականքի մեկնութիւնները բաժանուած են Չեռագրերում պրակների և ամեն մի գլուխ սովորաբար սկսում է «ընդ այսօսիկ հասկներս Աստուծով և առաջիկայ պրակը (հաճ տեսութիւն)» բառերով: Ուշագրութեան արժանի է այն, որ Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը սկսում է հետևեալ բառերով՝ «Հանդերձեալք հասկներս Աստուծով սկիզբն առնել առաջիկայ շարագրութեան», և նոյն մեկնութեան մէջ Պր. 2, էջ 271 (Վեհ. 1833) կրկնում է նոյն սճը՝ «Կատարելապէս հասկներս Աստուծով ի Բնաբանութիւնս Արիստոտէլի ուսցուք»: «Հասկներս Աստուծով» այդ դարձուածքը Դաւիթի սճի առանձնայատկութիւնն է, և որովհետև բացի վերնագրերից հանդիպում է նաև բնագրում, ուստի և յիշեալ վերնագրերն անպայման հեղինակինն են: Իսկ գրանից հետևում է, որ Սահմանք Իմաստասիրութեան երկը և Պորփիրի Ներածութեան և Արիստոտէլի Վերլուծականքի մեկնութիւնները, որոնց ամեն մի գլուխ վերոյիշեալ առանձնայատուկ վերնագիրն ունեն՝ ամենայն հաւանութեամբ միևնոյն հեղինակի գործ են: Սակայն Արիստոտէլի «Ստորագութիւնք» և «Յաղագս մեկնութեան» գրուածքների վերաբերեալ հայերէն մեկնութիւնները պրակների այդ վերնագրերը չունեն և չեն կազմում մի անընդհատ ամբողջութիւն, այլ մաս մաս մէջ է բերուած Արիստոտէլի բնագրից մի պրակ, և բնագրի ամեն մի պրակին հետևում է նոյն պրակի մեկնութիւնը: Այդ արտաքին հանգամանքը ևս մի նշան է, որ Ստորագութեանց և Յաղագս Մեկնութեան երկի հայերէն մեկնութիւնները Դաւիթինը չեն:

Նոյն եզրակացութիւնը ստացուում է նաև Դաւիթին վերագրած այդ երկերի ներքին բովանդակութեան ուսումնասիրութիւնից: Մինչդեռ Դաւիթ փիլիսոփայի՝ Սահմանք

Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները նորագոյնական մեկնիչի գրուածք են, որ աշխատում էր հաշտեցնել պղատոնական և արիստոտէլեան փիլիսոփայական գաղափարները՝ ընդհակառակը Ստորագութեանց և Յաղագս Մեկնութեան գրուածքի հայերէն մեկնութիւնները արիստոտէլեան մեկնիչի գրութիւններ են, որը Պղատոնին և պղատոնականներին յիշում է միայն հազուադիւր գէպքերում և հակառակում ու հերքում է նոցա կարծիքները: Այսպէս օրինակ՝ Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» երկի անանուն մեկնիչը էջ 507 (Վեհեա. 1833) ասում է՝ «Առ Պղատոնի ինձ թուի ի տեղոյս կռիւ ..... թայց սրտս ստացնալն»: Այդ տեսակէտից խիստ հետաքրքրական են այն հատուածները, որոնք փիլիսոփայական միևնոյն խնդիրների մասին լինելով, հիմնովին զանազանում են իրարից Դաւիթի և անանուն մեկնիչի գրուածքներում: Օրինակ՝ Դաւիթ փիլիսոփան միակ և երկակ թուերն ընդունում է ոչ իբրև թիւ, այլ իբրև թուերի սկիզբ<sup>1)</sup>, իսկ Ստորագութեանց անանուն մեկնիչը միանգամայն հակառակ է պղատոնականների այդ կարծիքին և այդ մասին գրում է հետևեալը՝ «Իսկ ոմանք ի պղատոնականացն կամին ասել, եթէ վասն զի հարկ է ընդունել զքանակն յամ. գոյացութիւն ոչ ըստ չափոյ միայն՝ իբր թէ մեծ կամ փոքր, այլ յաւէտ ըստ թուոյ՝ զի կամ մի է կամ բազում: Առ որս ասելոք, եթէ ձեզ իսկ հակառակս թիւնս կազմեք, քանզի ըստ Պիթակորականացն ձևացեալ ասէք թէ մինն ոչ է թիւ, այլ յաւէտ սկիզբն թուոյ<sup>2)</sup> ...»: Եւ ընդհանրապէս՝ Դաւիթի և անյայտ մեկնիչի փիլիսոփայական գաղափարները ոչ միայն յաճախ նման չեն, այլ և նոցա կարծիքների արտայայտման եղանակը տարբեր է, և մինչդեռ Դաւիթը շարունակ հմտա-

1) Տես՝ Սահմ. Իմաստ., էջ 187-188, Վեհ. 1833:

2) Յաղագս Քանակի, Պր. Ա., էջմ. Մատեն. Ձեռ. Թիւ 1810: Վենետիկեան հրատարակութեան մէջ Ստորագութեանց մեկնութեան սկիզբը պակաս է:



լից վկայութիւններ է բերում Պղատոնից, Արիստոտէլից և զանազան մեկնիչներից և մանրամասն քննադատում է իմաստասիրական այս կամ այն դպրոցի կարծիքները՝ անանուն հեղինակի մեկնութիւններն աղքատ են այդպիսի վկայութիւններով ու տեղեկութիւններով, և Արիստոտէլի Ստորագութեանց և Յաղագս Մեկնութեան երկի հայերէն մեկնութիւններում մեկնիչներից յիշում են միայն մի ոմն Դէմոս<sup>1)</sup>, Աղեքսանդրոս Ափրուզիսեցի<sup>2)</sup> և Աղեքսանդրոս, որ ամենայն հաւանութեամբ II դարի վերջում և III դարի սկզբում ապրող նոյն Ափրուզիսեցին է<sup>3)</sup>։

Յատկապէս Ստորագութեանց Մեկնութեան վերաբերմամբ կարելի է մէջ բերել նաև մի ուրիշ ակնյայտնի ապացոյց, որ այդ մեկնութիւնը Դաւթինը չէ։ Պորփիրի Ներածութեան մեկնութեան զանազան մասերում Դաւթի խոստանում է մի քանի հարևանցի մատնանիշ արուած իմաստասիրական խնդիրներ մանրամասն քննելու իւր Ստորագութեանց Մեկնութեան մէջ։ Այսպէս՝ էջ 263 (Վենետ. 1833), «իսկ բանականն եթէ մասն է իմաստասիրութեան, և եթէ գործի, ի Ստորագութիւնսն Արիստոտէլի ուսցուք».— էջ 269, «Բայց եթէ զի ակործեցին առնել զանհաւաստութիւն, կատարելապէս ի Ստորագութիւնսն Արիստոտէլի ուսանելոց եմք».— էջ 300, «Եւ արդ զի ոչ սեռ է և ոչ հոմանուն ձայն [էան], կատարելաբար ի Ստորագութիւնսն Արիստոտէլի ուսցուք»։ Արդ՝ Ստորագութեանց հայերէն մեկնութեան մէջ ոչ միայն վերոյիշեալ իմաստասիրական խնդիրների մանրամասն պարզաբանութիւնները չկան, այլ նոյն իսկ անանուն մեկնիչի տրամաբանական

1) Տես Մեկնութ. Պէրիարմ. գրոցն, էջ 514, Վենետ. 1833։  
 2) Ձեռ. Թիւ 1810, Մեկնութ. Ստորագութեանց, Յաղ. Ստոր. էջ 88b։  
 3) Տես Ձեռ. Թիւ 1810. Մեկնութ. Ստորագ. էջ 106a—Յաղագս գոյութեան, պր. ԺՎ. էջ 119a—Յաղագս Քանակի, պր. Ժ. էջ 126a—Յաղ. Առընչի, պր. Ե.։ Վենետիկի տպագրութեան մէջ այդ մասերը պակաս են։ Աղեքսանդրոսը յիշում է նաև Պէրիարմ. գրոց մեկնութեան մէջ, էջ 514, Վենետ. 1833։

հասկացողութիւնները զանազան ուրիշ կէտերում միանգամայն տարբեր են Դաւթի կարծիքներից։ Այն՝ ինչ որ Դաւթի խոստանում է «կատարելապէս ի Ստորագութիւնսն Արիստոտէլի» բացատրելու՝ պէտք է որոնել յունարէն ἀπὸ φωνῆς Δαβίδ Ստորագութեանց մեկնութեան մէջ, և ոչ թէ անանուն մեկնիչի գրուածքում։

Մեր կարծիքով վերոյիշեալ պատճառաբանութիւնների հիման վրայ կարելի է վերջնականապէս ապացուցուած համարել, որ Արիստոտէլի Ստորագութեանց և Յաղագս Մեկնութեան երկի հայերէն մեկնութիւնները Դաւթինը չեն, այլ մի անյայտ մեկնիչի գրուածքներ են, ուստի և այդ երկերի ներքին բովանդակութեան ուսումնասիրութեան հետևութիւնները, ինչպէս Վարդանի յիշատակութիւնը և հայ յօրինողի կամ թարգմանչի ներքին նշանները<sup>1)</sup>, ամենին առընչութիւն չունեն Դաւթի և նրա երկերի խնդրի հետ։ Վեննայի Մխիթարեանց Թիւ 112 Ձեռագրում Ստորագութեանց և Յաղագս Մեկնութեան երկի մեկնիչներն համարուում են Ամիրալտոյս և Անտոնիոս Էրմիս<sup>2)</sup>, որոնց մասին դեռ մանրամասն խօսելու ենք Դաւթի և նրա երկերի խնդիրն ըստ կարելւոյն պարզելուց յետոյ։

§5. Դաւթի իմաստասիրական երկերը.

Բացի Սահմանք Իմաստասիրութեան գրուածքից և Պորփիրի Ներածութեան մեկնութիւնից, որոնց յունարէնը

1) Տես Anecd. Oxon., §7, էջ VI և §15, էջ XIX-XX.  
 2) Տես Հ. Յ. Տաշեան, Յուցակ ..., էջ 389-395։ Իմ կարծիքով, Անտոնիոս կարող է Ամմոնիոս անուան աղճատում համարուել. երկաթադիր ՄՄ անուշադրութեամբ կարգացուել է ՆՏ։ Իսկ Էրմիս ոչ թէ յունարէն ἐρμηνεύς բառն է, այլ յատուկ անուն Ἐρμῆς, Ἐρμείας, Ἐρμείας։ Եթէ այս ենթադրութիւնը ճշտուի՝ Ստորագութեանց մեկնութեան մեծագոյն մասը Հերմիասի որդի Ամմոնիոսի համապատասխան մեկնութեան հայերէն թարգմանութիւնն է։



յայտնի է *ὁπὸ φωνῆς Δαβίδ* վերնագրով և որոնք հայերէնի հետ նոյնն են<sup>1)</sup>, տեղայնացեալ Ռաւթինն է նաև Արիստոտէլի Վերլուծականքի մեկնութեան 14 գլուխ հատուածը: Բացի պրակներէ «ընդ այսոսիկ հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակը» վերնագրերից, որոնք այդ Մեկնութեան Ռաւթից յօրինուած լինելու նշաններ են<sup>2)</sup> ուշադրութեան արժանի է և այն, որ ոչ միայն արամաբանական հասկացողութիւնները և դոցա մեկնութեան ու բացատրութեան եղանակն այդ գրուածքում նոյնն են, ինչ որ Ներածութեան մեկնութեան և Սահմանք Իմաստասիրութեան Ռաւթի երկերում — այլ և մի քանի հատուածներ այդ երեք գրուածքում գրեթէ բառացի նման են: Բերենք մի քանի օրինակներ.

Սահմ. Իմաստաս., էջ 214, (Վենետ. 1833).

«Արդ զգլխնական զօրութիւնսն զարդարէ ի ձեռն տեսականին, իսկ կենդանականն ի ձեռն գործականին որպէս զի մի գուռս գիտութիւն ի կարծեսց ընկալցուք, եւ մի շար ինչ գործեսցուք»:

Սահմ. Իմաստ., էջ 191.

«Քանզի տեսականին ամենայն դոյք ենթակային առ ի գիտել, իսկ գործականին մարդկային միայն հոգիք..... վասն զի կատարումս տեսականին ճշմարտութիւն է, իսկ կատարումս գործականին քարին»:

Մեկն. ի Վերլուծ., էջ 559 (Վենետ. 1833).

«Իսկ ապացուցական հաւաքումն պիտանացու գոյ յամենայն իմաստասիրութեան ի տեսականն և ի գործականն... որպէս զի մի գուռս գիտութիւն ընկալցուք եւ մի շար ինչ գործեսցուք»:

Մեկն. ի Վերլուծ., էջ 565.

«Արդ տեսականն նիւթ ունի դամենայն գոյսս առ ի գիտել, իսկ կատարումս զճշմարտին. իսկ գործականն նիւթ ունի զմարդկային հոգիս, իսկ կատարումս զքարին»:

1) *Sten Aneed. Oxon.*, §9, էջ VII և §31, էջ XXXVI.  
2) *Sten* սոյն աշխատութեան §4:

Պորփ. Ներծ. վերլ., էջ 259. Մեկն. ի Վերլուծ., էջ 584.

«Քանզի ասելն թէ վասն զի մարդ եւ ձի գներքին կլափն շարժեն և ասել՝ թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի գներքին կլափն շարժէ, ոչ է ճշմարիտ. քանզի կոկորդիլոս գազանն եւ փիւնիկն հաւ ոչ շարժեն գներքին կլափն, այլ զվերին»:

«Որգոն՝ վասն զի մարդ եւ ձի գներքին կլափն շարժեն, ոչ է հարկաւոր թէ ապա ուրեմն եւ ամենայն կենդանի գներքին կլափն շարժեն, որ ոչ է հարկաւոր փիւնիկաթեւի եւ կոկորդիլոսի և գուհի, որք զվերին կլափն շարժեն»:

Կարելի է աւելի օրինակներ բերել, բայց բուականանք սոցանով, որովհետև այսքանն էլ արդէն ցոյց է տալիս, որ Վերլուծականքի մեկնութիւնը պէտք է Ռաւթին վերագրել: Որքան մեզ յայտնի է, Ռաւթի Վերլուծականքի մեկնութեան յունարէնը նորագոյն աշխատասիրութիւններում չկայ յիշուած: Եթէ յունարէն բնագիրը կորած չէ, թերևս Ռաւթի երկերով հետաքրքրուողներից մէկին յաջողուի հայերէնի օժանդակութեամբ գտնել այդ մեկնութիւնը Արիստոտէլի մեկնիչների Բերլինի ընդարձակ հրատարակութեան մէջ<sup>1)</sup>:

Պորփիւրի Ներածութեան մեկնութեան մի հատուածից պարզ երևում է, որ Ռաւթի զրած պէտք է լինի նաև Արիստոտէլի Բնաբանութեան մեկնութիւնը: Այդ մասին էջ 271 (Վենետ. 1833) վկայում է ինքը Ռաւթի ճշտեալ տողերում. «Վասն զի նիւթ թէպէտ մի ինչ է, այլ ոչ ըստ տեսակի. և զի ոչ ընդհանրական ինչ է նիւթ և ոչ մասնական, կատարելապէս հանդերձ Աստուծով ի Բնաբանութիւնսն Արիստոտէլի ուսցուք»: Ռաւթի այս գրուածքն

1) Արիստոտէլի մեկնիչների այդ ընդարձակ հրատարակութեամբ արդէն լոյս են տեսել բազմաթիւ հատորներ: Բերլինի Ակադեմիայի այդ հրատարակութեան մասին՝ տես Fr. Ueberweg, Grundriss, Berlin 1886, էջ 188 «Eine umfassende auf 35 Bde berechnete Ausgabe der griechischen Commentare zu Aristoteles wird Berl. seit 1882 «consilio et auctoritate Academiae litterarum regiae Borussiae» herausgegeben:



ևս պէտք է որոնել Արիստոտէլի մեկնիչները վերոյիշեալ ընդարձակ հրատարակութեան հատորներում, որ լոյս են տեսնում Բերլինում: Բայց եթէ նոյն իսկ Դաւթի այդ մեկնութիւնը կորած համարուի՝ այնուամենայնիւ Արիստոտէլի մեկնիչներով զբաղուողները պէտք է ի նկատի առնեն այդ երկի գոյութիւնը, որովհետև Արիստոտէլի Բնաբանութեան Դաւթի յօրինած մեկնութիւնից կարող են քաղուածքներ լինել Դաւթից յետոյ գրուած զանազան մեկնութիւններում կամ ուրիշ երկերում:

Վերոյիշեալ եզրակացութիւնների հիման վրայ ստացուում է Դաւթի իմաստասիրական երկերի հետևեալ ցանկը.

- 1) Ընդդէմ առարկութեանց չորից Պիհոնի իմաստակի եւ սահմանք եւ տրամաութիւնք իմաստասիրութեան: Նոյնը յունարէն. Τα προλεγόμενα τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβίδ τοῦ θεοφιλεστάτου καὶ θεόφορον φιλοσόφου:
  - 2) Վերլուծութիւն Ներածութեան Պորփիրի: Նոյնը յունարէն սւեղի ընդարձակ ἀπὸ φωνῆς Δαβίδ (տես Anecd. Oxoniensia, § 31, էջ XXXVII):
  - 3) Մեկնութիւն չորեքասան գլխոց Արիստոտէլի ի Վերլուծական: Յունարէնը յայտնի չէ:
  - 4) Արիստոտէլի Ստորոգութեանց յունարէն մեկնութիւնը ἀπὸ φωνῆς Δαβίδ: Հայերէնը չկայ եւ յայտնի չէ, թէ արդեօք թարգմանուած եղել է:
  - 5) Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» երկի յունարէն մեկնութիւնը ἀπὸ φωνῆς Δαβίδ: Հայերէնը չկայ եւ թարգմանուած լինելու մասին տեղեկութիւն չունենք:
  - 6) Արիստոտէլի Բնաբանութեան մեկնութիւնը: Յայտնի չէ ո՛չ յունարէն քննադիրը, ո՛չ էլ Հայերէն թարգմանութիւնը:
- Շատ կարելի է, որ Դաւթի գրած է եղել և ուրիշ մեկնութիւններ և իմաստասիրական երկեր, սակայն այդ հարցը թերևս կարելի լինի աւելի պարզել ἀπὸ φωνῆς Δαβίδ յունարէն քննադիրի և ընդհանրապէս՝ յունարէն գրուած Արիստոտէլեան երկերի մեկնութիւնների մանրախոյզ հե-

տագօտութեամբ, որ մեր աշխատութեան սահմաններից դուրս է: Դաւթի ոչ-իմաստասիրական երկերով մենք դեռևս կենք զբաղուել, ուստի և այդ մասին կխոսափենք կարծիք յայտնելուց: Իսկ Գրիգոր Աստուածաբանի հինգ ճառերի նոննոսին վերագրուած մեկնութիւնների վերաբերմամբ որոշ հիմքեր կան ենթադրելու, որ այդ գրուածքն ևս նոյն Դաւթինն է, և այդ խնդրի մասին դեռ առանձին խօսելու ենք:

§ 6. Զանազան կարծիքներ Դաւթի անձի մասին եւ դոցա ֆենոքիւնը.

Դաւթի անձնաւորութիւնը մի առեղծուած է եղել թէ բիւզանդագէտների և թէ հայագէտ բանասէրների համար: Հայոց մատենագրութեան դեռ հնագոյն շրջանում Հայերի և Յոյների մէջ տարաձայնութիւններ են եղել Դաւթի անձի մասին: Էջմիածնայ մատենագրարանի զանազան Զեռագրերում գտնուում է «Պատճառ Սահմանաց գրոց» մի հատուած, ուր ի միջի այլոց ասուած է. «Առնէ զայս գիրք և ցուցանէ թէ այսպիսի կարողութիւն ունին Հայք և դուք բնդէր զայս անտես արարեալ էք և զՀայս ամբաստանէք: Ոմանք ասեն թէ ի տեղն ( ա. է.՝ Արևելոս ) գրեաց և զօրինակն ի հետս երբ և կէսը թէ յերկիրս գրեաց և առաքեաց որպէս Ստեփանոս զիւր թուղթն: Բայց Յոյնք ասեն Ե զիրք ունել զԴաւթի եւ իւրեանց ազգէն: Այլ յայտնի աշակերտ է Մովսիսի քերթողի և ազգական և ի Հարք գաւառէ ի Հերեթն գեղջէ և առ մեզ են Ե գիրք սորա. ա. Բարձրացուցէքն, բ. Սահմանացս, գ. Պէտքն, գ. Մեկնութիւն Բերականին, ե. մեկնիչն Արիստոտէլի<sup>1)</sup>...»:

Բանասիրական վիճելի ենթադրութիւնների այդ համեմա-

1) Տես Զեռ. Թիւ 1887—Կարին, Թ. 1845, թերթք 247 և 248.



տաքար հին հատուածը մեզ համար հետաքրքրական է միայն այն տեսակէտից, որ Յոյները Դաւթին իրանց ազգից են ընդունել:

Բիւզանդական մատենագրութեան մէջ այս Դաւթին շփոթել են IX-րդ դարի Niketas David Paphlagon-ի հետ <sup>1)</sup> († մօտ. 890 թուին): Այս կարծիքը միանգամայն սխալ պէտք է համարել, որովհետեւ Դաւթի երկերի բովանդակութիւնից շատ հաւանական է ենթադրել, որ նա ուսած պէտք է լինի հին իմաստասիրական դպրոցներից մէկում, երբ այդ դպրոցները Յուստինիան կայսեր կարգադրութեամբ դեռևս չէին փակուած, և բացի այդ՝ արդէն յայտնի է, որ IX-րդ դարից առաջ հայ մատենագիրներն օգտուել են Դաւթի աշխատութիւններից<sup>2)</sup>: Ինչպէս «Պատճառ Սահմանաց գրոց» հատուածի հեղինակը, նոյնպէս և գրեթէ բոլոր նորագոյն հայ բանասէրները Դաւթին համարում են Հայ Հարք գաւառից և Հերեան գիւղից: Դաւթի Հարքացի հայ փիլիսոփայի մի որոշ յիշատակութիւն գտնուում է Ասողկան «Պատմութիւն Տրեզերական» երկում էջ 80. «Յայսմ ժամանակի Մամրէ եղբայր Մովսիսի, գորմէ ասեն երրորդ գտեալ ի փիլիսոփայս դառնայր ի Հայս և Դաւիթ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ ի Հերեան գեղջէ (Ս. Պետեր. 1885): Ասողիկ Դաւիթ Հարքացուն համարում է ժամանակակից Իււս կաթողիկոսին և Յովհան Մանգակունուն: Բազմաթիւ մեր նայած Սբ. Էջմիածնի մատենադարանի Չեռագրերում Սահմանաց գրոց և մեկնութիւնների վերնագրերը միակերպ չեն և այդ վերնագրերում Դաւթին անուանում է կամ «անյաղթ փիլիսոփայ» կամ «Ներգինացի» և կամ միայն «փիլիսոփայ»: Հայր Դարեգին Չարբանալեան այդ

1) Karl Krumbacher, Gesch. der byz. Litter., Zw. Aufl., München 1897, § 183, էջ 432.  
2) Դաւուստ Տէր-Մկրտչեան, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, «Արարատ» 1902, յունուար և փետրուար: Նոյն հեղինակի, Անանիա Շիրակացի, «Արարատ» 1896 փետր. և ապր.:

Ներգինացի մակդիրը բացատրում է այսպէս. «Մովսիսի Խորենացոյն քեռորդի էր Դաւիթ, Տարօնոյ մօտ Հարք գաւառին Հերեթ կամ Հերեան գիւղէն, և կամ ըստ այլոց՝ Ներգինն աւանէն, ուստի եւ Ներգինացի կոչուած<sup>1)</sup>»: Ս.յլ կերպ մեկնում է Հ. Դաւուստ Տէր-Մկրտչեան. «Դաւիթ Հարքացին որ կոչուում է նաև Հերտանացի կամ Հերեանացի՝ գիւղի անունով, այլ եւ Ներգինացի կամ Ներքինացի՝ Ներքնավանքի անունով, ուր թաղուած է ըստ աւանդութեան<sup>2)</sup>»: Մի փոքր տարօրինակ է, որ միևնոյն Դաւիթը երեք տեղերի անունով է կոչուում, սակայն այդ խնդրի լուծումը մեր նպատակից դուրս է, որովհետև մեր կարծիքով Սահմանք Իմաստասիրութեան երկի և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնների հեղինակը Դաւիթ Հարքացին չէ: Հայոց մատենագրութեան մէջ նորագոյնական մեկնիչ Դաւիթը շփոթուած է Դաւիթ Հարքացու հետ, ինչպէս և բիւզանդական մատենագրութեան շրջանում Niketas David Paphlagon-ի հետ: Սբ. Էջմիածնայ մատենադարանի թիւ 102 Չեռագրում<sup>3)</sup> գտնուում է Դաւիթ Հարքացուց մի մնացորդ «Դաւթի Հարքացուց եւ փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուած», որը հրատարակեց Հ. Դաւուստ Տէր-Մկրտչեան<sup>4)</sup>: Դաւիթ Հարքացու այդ մնացորդը ոչ մի հիմք չկայ անվաներական համարելու, մանաւանդ որ այդ ընդարձակ իմաստասիրական գրուածքը պահուած է պատկառելի հնութիւն ունեցող 971-981 թուի Չեռագրում: Այդ Հարքացու այդ մնացորդը թէ ոճով, թէ բովանդակութեամբ և թէ փիլիսոփայական ուղղութեամբ միանգամայն տարբեր է

1) Հայկ. Հին Դպր. Պատմ., Վենետ. 1886, էջ 295:  
2) Տե՛ս «Դաւիթ Հարքացի», Արարատ, 1902, սեպտ.-հոկտ., էջ 937:  
3) Գեորգեան Յուլիան, Երկաթագիր, գրուած Հայոց Նի և Նի թուին:  
4) Տե՛ս «Դաւիթ Հարքացի», Արարատ, 1902, սեպտ.-հոկտ., էջ 939-963:




նորպղատոնական Դաւիթ մեկնիչի երկերից: Վերցնենք Հարքացու հարցուպատասխանների հենց սկիզբը. «Հարցումն. Զինչ է մարդը—Պատասխանի. Հոգի ի մարմնի կապեալ միջնորդաւ շնչոյ և ի նոյն երկուքն միաւորեալ. սա մարդ ասի և Աստուծոյ պատկերն: Նորպղատոնական Դաւիթ մեկնիչը նոյնը կասմանէր թի սեռէ և ի բաղկացուցիչ զանազանութեանց» և կպատասխանէր՝ «մարդ է՝ կենդանի բանաւոր մահկանացու մտաց և հանճարոյ ընդունակ»: Այսպէս և բոլոր հարցերն ու պատասխանները միանգամայն խորթ և անհամապատասխան են Դաւիթ մեկնիչի իմաստասիրական հասկացողութիւններին: Հարքացու իմաստասիրական հարցուածների գրեթէ ամեն մի էջում նկատելի են Փիլոնի ազդեցութեան հետքեր, ինչպէս այդ ճիշտ նկատել է Հ. Գալուստ Տէր-Մկրտչեան, իսկ նորպղատոնական Դաւիթ մեկնիչի գրուածքներում Փիլոնի ազդեցութեան և ոչ մի նշան չկայ: Դաւիթ Հարքացու գրեթէ ամեն մի հարց և պատասխանից երևում է նրա քրիստոնեայ լինելը, մինչդեռ նորպղատոնական Դաւիթ փիլիսոփայի գրուածքների միայն մանրանոյց և երկար քննութիւնից յետոյ յաջողուեց մեզ նրա քրիստոնեայ լինելու մի փոքր հետք գտնել: Դաւիթ Հարքացի հայ վաւերական հեղինակը և նորպղատոնական Դաւիթ փիլիսոփան տարբեր անձնաւորութիւններ են: Այս բացասական եզրակացութեամբ մեկնիչ Դաւիթի անձնաւորութեան վերաբերեալ առեղծուածի լուծումն աւելի դժուարանում է, որովհետև ինչպէս ցոյց տուինք՝ սա ոչ նիկեոսա Դաւիթ Պափլագոնն է, ոչ էլ Դաւիթ Հարքացին: Որովհետև թէ Հայոց և թէ Յունաց մատենագրական ծանօթ աւանդութիւնները մեկնիչ Դաւիթի անձնաւորութեան որոշման համար անստոյգ և խառնաշփոթ ենթադրութիւններ են, ուստի և այդ խնդրի որոշման համար մէջ բերենք մի քանի ակնարկներ և տեղեկութիւններ հենց նոյն Դաւիթի գրուածքներից:

§7. Սահմանի Իմաստասիրութեան եկը եւ Ներածութեան ու Վերլուծականի մեկնութիւնները թարգմանուած են յունարէնից.

Հայոց մատենագրական աւանդութեան հետեւութեամբ՝ նորագոյն հայ բանասէրներից շատերն ևս շփոթել են նորպղատոնական Դաւիթ մեկնիչին Դաւիթ Հարքացու հետ և, ընդունելով Դաւիթ մեկնիչին իբրև հայ հեղինակ՝ կարծել են որ Դաւիթի վերոյիշեալ իմաստասիրական երկերը թարգմանութիւն չեն, այլ գրուած են եղել հայերէն: Արդ՝ այդ կարծիքը միանգամայն սխալ է: Մեծարգոյ ուսուցչապետ Փ. Կոնիբերի համեմատել է Ներածութեան մեկնութեան հայերէն և յունարէն բնագրերը և եկել է այն եզրակացութեան, որ հայերէնը ըբառ առ ըբառ տառացի թարգմանութիւն է յունարէնից<sup>1)</sup>: Ներածութեան մեկնութեան յունարէն բնագիրը, որ տպագրուած է Արիստոտէլի Բերլինի հրատարակութեան Դ. հատորում<sup>2)</sup> աւելի ընդարձակ է քան հայերէն թարգմանութիւնը: Կոնիբերի կարծիքով՝ հայերէնը մի ամփոփ ամբողջութիւն է կազմում, իսկ Բրանդիսի հրատարակած յունարէն բնագրի ընդարձակ մասերն առաջացել են քաղուածքներից և յաւելումներից, որոնք բնագրում ներմուծուած են ուրիշ զանազան մեկնիչների գրուածքներից<sup>3)</sup>: Չեռքի տակ չունենալով յունարէն բնագիրը՝ դժբախտաբար անկարող ենք որոշ կարծիք յայտնել պր. Փ. Կոնիբերի այս վերջին ենթադրութեան մասին:

Արդ՝ ընդունելով որ Ներածութեան մեկնութիւնը

1) Anecd. Oxon., §31, էջ XXXVII.  
 2) Bd. IV: Scholia in Aristotelem, collegit Christ. Aug. Bran-  
 dis, Berol. 1836.  
 3) Anecd. Oxon., §31, էջ XXXVII.





Թարգմանուած է յունարէնից, այն էլ գրեթէ տառացի կերպով ամենայն հաւանութեամբ կարելի է նաև եզրակացնել, որ Արիստոտէլի Վերլուծականքի ԺԳ. գլուխ մեկնութիւնը և Սահմանք Իմաստասիրութեան երկը, իբրև միևնոյն հեղինակի՝ Դաւիթ մեկնիչի՝ գրուածքներ, նոյնպէս թարգմանուած են յունարէնից: Անհաւատի կլինէր կարծել, որ Դաւիթ մեկնիչը իւր երկերից ներածութեան մեկնութիւնը գրել է յունարէն, իսկ Սահմանք Իմաստասիրութեան երկը և Վերլուծականքի մեկնութիւնը՝ հայերէն: Այդպիսի մի ենթադրութիւն անհիմն կլինէր նախ այն պատճառով, որ Դաւիթ մեկնիչի բոլոր երկերն էլ հայերէնում նոյն խրթին և անհարազատ ոճն ունեն՝ լեզուական նման առանձնայատկութիւններով, որոնք յունարէնից թարգմանուած լինելու պերճախօս և ակնյայտի նշաններ են:

Ուշագրաւ է սակայն այն հանգամանքը, որ Սահմանաց և մեկնութիւնների թարգմանութիւնը տարբեր է Պորփիրի ներածութեան և Արիստոտէլի Ὀργάνου-ի բնագրի թարգմանութիւնից: Մինչդեռ մեկնուող բուն բնագիրը փոխադրուած է յունարէնից ոչ միայն բառացի, այլ վանկ առ վանկ տառացի նմանութեամբ՝ Սահմանք Իմաստասիրութեան երկը և մեկնութիւններն ըստ երևոյթին թարգմանուած են փոքր ինչ ազատ, ոչ այնքան ծայրայեղ վանկական նոյնութեամբ: Փոխադրութեան վերաբերեալ այս ենթադրութիւնն անհրաժեշտ է ստուգել, համեմատելով Սահմանք Իմաստասիրութեան երկը Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας բնագրի հետ, որով թարգմանութեան խնդիրը հաստատուն և վերջնական լուծումն կտանայ:

Շատ կփափաքէինք, որ Τὰ προλεγόμενα յունարէն բնագիրն առձեռն ունեցող որևէ բանասէր յանձնառու լինէր այդ ուսումնասիրութեան: Համեմատութեան Ժամանակ խիստ կարևոր կլինէր որոշել, թէ արդեօք Պրոլեգոմենայի յունարէն բնագրում կան ստորև առաջ բերուած այն հատուածները, որոնք Դաւիթ մեկնիչի արևելցի և նոյն իսկ Հայ լինելու նշաններ են: Եթէ այդ հատուածները

ներմուծուած չեն հայերէն բնագրում թարգմանչից՝ թերևս հնարաւոր համարուի ընդունել, որ Դաւիթ մեկնիչը յունարէն գրող մի հայ փիլիսոփայ է, որին սակայն սխալ կլինի նոյնացնել Դաւիթ Հարքացու հետ: 1)

Սահմ. Իմաստաս. էջ 198 (Վենետիկ 1833) հայերէն բնագրում յիշուած է ոմն Տիգրան, հաւանօրէն Տիգրան Մեծն:

«Իսկ շարունակ քանակն ոչ կարէ անշփոթաբար տեսակս ընդունել զանազանս, վասն զի մամ որ է շարունակ քանակ, եթէ որ ստեղծանիցէ զնա ըստ Տիգրանայ կերպարանին, ոչ կարէ այլ կերպարան ընդունել՝ եթէ ոչ յառաջագոյն ի բաց եղանի, ապա եթէ ոչ շփոթումն լինի»: 2)

Տիգրանի յիշատակութիւնը եթէ յունարէնում ևս գտնուի՝ մի որոշ փաստ կլինի Դաւիթ մեկնիչի արևելցի և հաւանաբար նաև հայ ծագման:

Խիստ հետաքրքրական է նաև մի այլ հատուած՝ Սահմ. Իմաստաս. էջ 163 (Վենետ. 1833):

«Վասն որոյ մարմին կոչի, այս ինքն ընդարմ: վասն զի ընդարմացուցանէ զհոգին և ընդարմանայ ի գերեզմանի»:

Միայն հայերէն գրող մի հեղինակ կարող էր «մարմին» բառը բացատրել իբրև «ընդարմ», որովհետև այդ մեկնութիւնը մի տեսակ ռամկական ստուգաբանութիւն է, «մարմին» բառի հնչման վրայ հիմնուած: Կարծում ենք,

1) Տես սոյն աշխատութեան §6.

2) Էջմիածնի Թիւ 1810 Ձեռագիրը (—Վարեն. Յուց. Թ. 1767) ունի յաճախ այնպիսի ընթերցումներ, որոնք տեղ տեղ ուղղում են Վենետիկում տպագրուած բնագիրը, օրինակ՝ սոյն հատուածում Թ. 1810 Ձեռ. ունի լուազոյն ընթերցում՝ «եթէ ոչ յառաջագոյն ի բաց եղձանիցի, ապա թէ ոչ շփոթութի լիցի»: Եւ ընդհանրապէս՝ Դաւիթ մեկնիչի Իմաստասիրական երկերի Վենետիկան հրատարակութիւնն անբաւարար պէտք է համարել հայերէն լուազոյն ձեռագրերի և յունարէնի բազմաթիւութեամբ շատ զգալի կերպով փոփոխուած և սրբագրուած մի նոր բնագիր կարելի է ստանալ:



որ յունարէնի հետ բաղդատութիւնը յոյց կտայ, որ այդ կասկածելի կտորը ներմուծուած է թարգմանութեան ժամանակ կամ լուսանցքի սովորական նկատողութիւններէն: Այդ ենթադրութիւնը յիրաւի անխուսափելի է, քանի որ շատ զօրեղ են այն հիւղերը, որոնք նոյապատուոր են Սահմանք Իմաստասիրութեան երկի յունարէն լեզուով յօրինման:

Ինչ թուում է, որ Հայոց մատենագրութեան հին շրջանում համարեա թէ անհնարին էր յօրինել իմաստասիրական անթիւ նուրբ գարձուածքներով և բառերով այնպիսի հայերէն գրուածքներ, ինչպէս Դաւիթ մեկնիչի Սահմանքը և մեկնութիւնները: Ուշագրութեան պէտք է առնել, որ այդ շրջանում չկային նման իմաստասիրական նախնազոյն աշխատութիւններ և ոչ էլ իմաստասիրական մտքեր և գաղափարներ արտայայտող փոքր ի շատէ ճիւղն և հարուստ լեզու: Նոյն իսկ խիստ գթուար պէտք է լինէր իմաստասիրական երկերը գեղեցիկ և հասկանալի ոճով յունարէնից փոխադրելը, մասամբ հենց այդ պատճառով էլ առաջացաւ տառացի և գրեթէ վանկ առ վանկ թարգմանելու եղանակը՝ արուեստական և խորթ բառակազմութիւնով և յունաբան գարձուածքներով:

§8. Նորպիսոնական Դաւիթ մեկնիչը Աղեքսանդրիայում ուսած Զ-րդ դարի մասեմագիր է:

Հայոց մատենագրական ուսումնասիրութիւններէց անկախ՝ από φωνής Δαβίδ յունարէն բնագրի վկայութիւնների վրայ հիմնուելով՝ բիւզանդագէտները Դաւիթ մեկնիչի վերաբերմամբ եկել են այն կարծիքին, որ նա կրտսեր Ոլիմպիոզորոս փիլիսոփայի աշակերտն է եղել: Իսկ կրտսեր Ոլիմպիոզորոս փիլիսոփայի մասին յայտնի է, որ նա Հերմիասի որդի Սմոնիոսի աշակերտներէց է և Զ-րդ դարի սկզբում Յուստինեան կայսեր ժամանակ դասախօսել է

Աղեքսանդրիայում, ինչպէս և նրա ուսուցիչ Հերմիասի որդի Սմոնիոսը:

Դաւիթ մեկնիչի մասին յունարէն բնագրերի տեղեկութիւններից հետեցրած այդ եզրակացութեան ամփոփումը գտնուում ենք Կարլ Կրումբախերի «Պատմութիւն բիւզանդական գրականութեան» երկում. «Olympiodoros muss als Verfasser des verlorenen Kommentars (zur Jsagoge) angesehen werden, aus welchem die beiden uns erhaltenen Schriften seiner Schüler Elias (Helias) und David geflossen sind. Die Blütezeit des Elias, der, als er sein Werk abfasste, noch nicht dem christlichen Glauben angehörte, fällt in die Mitte des 6. Jahrhunderts. Bedeutend ferner steht seiner Quelle das unter dem Namen des David, auch Niketas David, erhaltene Werk. Wahrscheinlich ist diese griechische Schrift nur eine breitere Ausführung des von dem armenischen Philosophen David verfassten Kommentars und wohl aus Lehrvorträgen desselben hervorgegangen»:<sup>1)</sup>

Բիւզանդագէտների այս ուշագրաւ տեղեկութիւնը համեմատաբար նորագոյն ուսումնասիրութիւնների արդիւնք է և երևի յայտնի չէ եղել մեծարգոյ ուսուցչապետ Փ. Կոնիբիրին, որը իւր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ խիստ բռնադրօսիկ և հակասական հետեւութիւններ է անում Դաւիթ մեկնիչի ժամանակի մասին:<sup>2)</sup> Բոլորովին աւելորդ և անօգուտ կլինէր քննութեան ենթարկելու նորպիսոնական Դաւիթի վերաբերեալ մատենագրական և բնասիրական անհիմն և անապացոյց ենթադրութիւնները, ուստի և մեր ուսումնասիրութեան մէջ, թողնելով անտես այդ կարծիքները՝ քննութեան կառնենք միմիայն Դաւիթի երկերի ներքին բովանդակութեան հետազոտութիւնից ստացուած գրական և հաստատուն այն վկայութիւնները, որոնք Դաւիթի առեղծուածը լուսաբանելու և պարզելու համար էական նշանակութիւն ունեն:

1) K. Krumbacher, Gesch. der byz. Litter., zw. Aufl., München 1897, էջ 432.

2) Տե՛ս Anecd. Oxoniens., §7, §9, §12 և §18.



Սահմանք իմաստասիրութեան գրուածքում երկու անգամ յիշուում է Ուիմպլիոգորոս փիլիսոփան, և առաջ են բերուում նրա իմաստասիրական բնորոշ բացատրութիւնները՝ սահմանի բառական արտաքին կազմութեան մասին և թէ ինչպէս պէտք է հասկանալ Փեդոնի տրամաբանութեան մէջ Պրատոնի տուած այն որոշումը, թէ «իմաստասիրութիւն է խոսումն մահու»։ Ուիմպլիոգորոսին վերագրուած կարծիքները հարկաւ պէտք է որոնել նրա մեկնական գրուածքներում։ Բացի այդ, ընդունելով որ Դաւիթ մեկնիչը կրտսեր Ուիմպլիոգորոսի աշակերտն է՝ արդէն a priori խիստ հաւանական կլինէր կարծել, որ նոցա իմաստասիրական դատողութիւններն ու մեկնութիւնները մեծ մասամբ նման և համաձայն պէտք է լինեն, ուստի և, այդ ևս աչքի առաջ ունենալով՝ հարկաւոր է համեմատել և քննել նոցա երկերի ներքին բովանդակութիւնը։

Ուիմպլիոգորոսի հիացական խօսքերը սահմանի արտաքին յօրինուածութեան մասին գտնուում է Սահմ. իմաստաս. երկում էջ 143. բայց որպէսզի հասկանալի լինեն այդ խօսքերը՝ հարկաւոր է առաջ բերել նաև նախորդ տողերը.

Սահմ. իմաստ. 142—143 (Վենետ. 1833). «Եւ պարտ է դիտել, զի ի սահմանս հակակիրք միմեանց լինին բառք և իրք։ Քանզի յորժամ սահման առաւելու բառիք, նուազեն իրք. որդոն, մարդ կենդանի բառաւոր մահկանացու մասց և հանճարոյ ընդունակ, քերթող։ Քանզի քերթողն յաւելումն եղեալ ի սահմանի՝ նուազեցոյց զիրն. վասն զի զքերթողն միայն սահմանեաց և ոչ զամենայն մարդ. քանզի ոչ ամենայն մարդ քերթող. ահա առաւելաւ ի բառոք՝ և նուազութիւն եղև իրացդ։ Իսկ յորժամ նուազեն բառք՝ առաւելուն իրքդ. որդոն, մարդ կենդանի բանական. ահա նուազեցին բառք՝ և յաւելան իրքդ։ Վասն զի ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ և հրեշտակք և դեք. ևւ որպէս ասէր Ուրմպլիադորոս փիլիսոփոս՝ եթէ Սքանչելի իմն հնարս եղիա բնութիւնս. նուազութիւն հարստացեալ՝ և հարստութիւն կեղծաւորեալ զնուազութեանցն»։

Շատ նուրբ և խորիմաստ կերպով բացատրում է մեկնիչ Դաւիթը Պրատոնի—իմաստասիրութիւն է խոսումն մահու—որոշումը և կարծում է, որ «մահ պարտ է աստանոր իմանալ ոչ զբանաւորական մահն՝ այլ զախորժականն. որով զմեռելութիւն գործէ ախտից»։ Իւր այդ մեկնութիւնը հաստատելու համար ի միջի այլոց յիշում է Ուիմպլիոգորոսի հետեւեալ խօսքերը.

Սահմ. իմաստաս. էջ 164 (Վենետ. 1833) «Ան այսուսիկ ասաց Ուրմպլիադորոս փիլիսոփոս, եթէ ոչ պրատոնական գիրն զիմս նահանջէր զյարձակումն, այն ինչ ահա առժանաբար լուծանէի զյորճաթախանձ կապ կենցաղոյ»։

Ուիմպլիոգորոսից վկայութիւններ պարունակող վերոյիշեալ հատուածներում ուշադրութեան արժանի մի կէտ կայ։ Դաւթի երկերին մօտ ծանօթանալուց յետոյ կարելի է նկատել, որ նա ուրիշ փիլիսոփաների վերաբերմամբ երբեք չէ գրում «ասէր» և «ասաց», այլ միշտ գործ է ածում նոյն կամ այլ բայերի ներկայ ժամանակը. օրինակ՝ «ասէ Արիստոտէլ», «յիշէ Պրատոն», «Պրատոն կարծէ», «յայտ առնէ Պրատոն ասելովն» ևն. «Ասէր» և «ասաց» ձևերի գործածութեան եզակի և բացառիկ սոյն դէպքերը թողնում են մեզ վրայ այն տպաւորութիւնը, որ Դաւիթ մեկնիչն ինքը լսել է կրտսեր Ուիմպլիոգորոս փիլիսոփայի դատախօսութիւնները։ Այսպիսով՝ թերևս կարելի լինի ենթադրել, որ բիւզանդագէտների անկախ հետեւութիւնը Դաւիթ մեկնիչի կրտսեր Ուիմպլիոգորոսի մօտ աշակերտած լինելու մասին մասամբ ճշտում է նաև հայերէն բնագրի օգնութեամբ։

Մենք ընդունում ենք, որ «ասէր» և «ասաց» ձևերի գործածութեան մասին տուած մեր մեկնութիւնը կարող է շատերին երկբայելի թուալ, յամենայն դէպս այդ միայն մի ենթադրութիւն է և ոչ թէ հիմնաւոր ապացոյց։

Սակայն բիւզանդագէտների հաղորդած տեղեկութիւնից և վերոյիշեալ ենթադրութիւնից անկախ՝ Դաւիթ մեկնիչի իմաստասիրական երկերի հայերէն բնագրում կան



աւելի զօրաւոր և ակնյայտնի նշաններ, որոնք նոյնպէս ապացուցանում են Դաւթի Զ-րդ դարի հեղինակ լինելը և անուղղակի կերպով հաստատում են բիւզանդագէտ բանասէրների վկայութեան ստուգութիւնը:

Որքան ինձ յայտնի է, Դաւթի խնդրով զբաղած բանասէրների ուշադրութիւնից վրիպել է այն ուշադրու հանգամանքը, որ Դաւթ մեկնիչը բացի Ոլիմպիոսի փոփոխայեց յիշում է Եւտոկիոս, Ամնիոս և Աղեքսանդրոս մեկնիչներին, որոնց գրուածքներից առաջ են բերում վկայութիւններ և քաղուածքներ: Դաւթի յունարէն բնագրերին ծանօթ բանասէրները չէին կարող այդ նկատել, որովհետև այդ մեկնիչները յիշում են Վերլուծականքի մեկնութեան հայերէն բնագրում, իսկ նոյն մեկնութեան յունարէն բնագիրը նրանց ծանօթ չէ, այնպէս որ կարող է և կորած լինել: Թէև աներկբայելի է որ յունարէն բնագիրը գոյութիւն ունեցել է, որովհետև հայերէնը գրեթէ բառացի թարգմանութիւն է յունարէնից:

Եւտոկիոս, Ամնիոս և Աղեքսանդրոս մեկնիչների յիշատակութիւնը և սոցա երկերից առնուած վկայութիւններն ու քաղուածքները, մեր կարծիքով, առաջնակարգ նշանակութիւն ունեն Դաւթի ժամանակի խնդիրը լուսաբանելու համար: Այդ վկայութիւններն ու քաղուածքներն անհրաժեշտ ենք համարում ամբողջովին առաջ բերել, յուսալով որ մեկնիչների յունարէն բնագրերին ծանօթ մասնագէտներին թերևս յաջողուի գտնել յունարէնում համապատասխան հատուածները:

Մեկնութ. ի Վերլուծ., Պր. Գ., էջ 564 (Վենետ. 1833). «Երրորդ եթէ է մասն, և եթէ մասնիկ իմաստասիրութեան բանականս, Եւտոկիոս սկիզբն աննելով յիշատակութեանն Պորփիրի Ներածութեանցն ինչպէս իսկ Աղեքսանդրոս զսուաշիկայս յիշատակելով զիրողութիւնն լաւագոյն քան զնա տրար. քանզի խնդրէ, եթէ մասն է, և եթէ գործի իմաստասիրութեան բանականս, կամ ըստ հաւաքաբանին միայն է, և կամ ըստ բոլորին»:

Մեկնութ. ի Վերլուծ., Պր. Թ., էջ 578 և 579 (Վենետ. 1833). «Բայց սահմանէ զամենայն հաւաքաբանութիւն, զստորագականն և կամ զստորադրականն՝ ոչ զայս և ոչ զայն: Քանզի բացատրեցեալք սահման ամենայնում հաւաքաբանութեան պատշաճի: Իսկ Աղեքսանդրոս առյարակայիցս պտտմիչ քանից, ասէ՝ թէ Զստորագականն միայն սահմանէ հաւաքաբանութիւն, երկրորմբք այսրբիք հաւատարմացոյցանելով զբանդ: Միով և առաջնով, եթէ զստորագական առաջարկութիւն սահմանեաց միայն, իսկ ստորագականը հաւաքաբանութիւնը ի ստորագականացն գան յառաջարկութեանց: Ասէ և երկրորդ պատճառ, եթէ զանագանութիւնս յարագրէ աւարանոց և անաւարտից հաւաքաբանութեանց, իսկ աւարտեալն և անաւարտն՝ ստորագականացն միայն գոյ հաւաքաբանութեանց:..... Եւ արդ այսոքիկ առ Աղեքսանդրոս ասացին»:

3. Մեկն. ի Վերլուծ., Պր. է, էջ 574. «Վասն որոյ տարակուսեն, եթէ զիւրդ զտրամաբանականն հարցումն հակասութեան ասէ. իսկ ի յազագս մեկնութեան, միոյ պատասխանոյ հարցումն, և կամ միոյ մասին նորա: Առ որ Ամնիոս ասէ լուծումս իմն այսպիսի, եթէ երկրորեան ճշմարիտ գոն. զի և որ զբոլոր հակասութեանց հարցանէ՝ տրամաբանական է»:

Այս բոլոր հատուածները խիստ կարևոր են այն տեսակէտից ևս, որ պարզում են նորագատնական Դաւթի ամենամտ ազբիւրների խնդիրը: Բացի կրտսեր Ոլիմպիոսի փոփոխութիւններից՝ Դաւթ մեկնիչն օգտուել է ուրեմն Եւտոկիոս, Ամնիոս և Աղեքսանդրոս մեկնիչների աշխատութիւններից: Բայց ո՞վ են այս մեկնիչները և երբ են ապրել:

«Եւտոկիոս սկիզբն աննելով յիշատակութեանն Պորփիրի Ներածութեանցն» խօսքերից երևում է, որ Եւտո-



կիսս հաւանաբար գրել է Պորփիրի Ներածութեան մեկ-  
նութիւնը, և յամենայն դէպս նրան պէտք է որոնել Պոր-  
փիրի ժամանակից յետոյ Դ-Ձ դարի մեկնիչներէ շարքում:  
Ի նկատի առնելով, որ մեզ հասած Ներածութեան մեկ-  
նութիւններից հնագոյնը վերագրուում է Ե-Ձ դարի մեկ-  
նիչ՝ Հերմիասի որդու Ամոնիոսին,<sup>1)</sup> — ուրեմն կարելի է  
հետեցնել, որ Եւտոկիոսը ոչ թէ Դ-րդ դարի, այլ  
աւելի յետին ժամանակների մեկնիչներէն է: Եւ յիշաւի՝  
Եւտոկիոս անունով միայն մի մեկնիչ կայ յայտնի՝ Եւտո-  
կիոս Ասկարնացի Ատորին, որ ապրել է Ե—Ձ դարում: Եւ-  
տոկիոս Ասկարնացին թուարան և երկրաչափ մեկնիչնե-  
րից է, իւր երկերը նուիրել է Ամոնիոսին և P. Tannery-ի  
կարծիքով ծնուել է ամենաուշը 480 թուին<sup>2)</sup>: Որ Եւտոկիոս  
Ասկարնացին բացի թուարանական և երկրաչափական  
մեկնութիւններից կարող էր գրած լինել նաև իմաստա-  
սիրական մեկնութիւններ՝ այդ շատ հաւանական է, քանի  
որ Ե-Ձ դարում թուարանական և երկրաչափական նշա-  
նաւոր երկերը մեկնում և ուսումնասիրում էին գլխաւո-  
րապէս նորագոտոնական մեկնիչները, և այդ հասկանալի է,  
որովհետև ըստ Պղատոնի թուարանութիւնն ու երկրաչա-  
փութիւնը և ընդհանրապէս իմաստասիրութեան ուսումնա-  
կան մասը համարուում էր բուն իմաստասիրութեան նա-  
խակրթութիւն: Եւտոկիոս ըստ երևոյթին այդ նորագոտո-  
նական մեկնիչներից է, և նրա աշխատասիրութիւններից յու-  
նարէնում պահուել և մեզ են հասել միայն թուարանական  
և երկրաչափական մեկնութիւնները, իսկ այժմ Դաւիթ  
մեկնիչի վերոյիշեալ վկայութեամբ հաստատուում է, որ  
Եւտոկիոսը գրել է նաև Պորփիրի Ներածութեան մեկ-

1) Karl Krumbacher, Gesch. der byz. Litter., zw. Aufl., էջ 432.

2) Տես K. Krumbacher, GBL, zw. Aufl., էջ 625 և Siegmund  
Günther, Abriss der Geschichte der Mathematik und der Naturwissen-  
schaften im Alterthum, էջ 245, 257: Այս աշխատութիւնը լոյս է  
տեսել իրի Յաւելում Վ. Վինդելբանդի, Հին փիլիսոփայութեան  
պատմութեան, W. Windelband, Geschichte der alten Philosophie,  
München 1894, zw. Aufl.

նութիւն: Որքան ինձ յայտնի է, այս վերջին տեղեկութիւնը  
մի նորութիւն է և միանգամայն անծանօթ մեկնիչների յոյն  
բնագրերով զբաղուողներին: Վերլուծականքի մեկնութեան  
այդ նոր վկայութիւնը, մեր կարծիքով, լուսաբանում է նաև  
այն խնդիրը, թէ ինչու Եւտոկիոս Ասկարնացին իւր երկերը  
նուիրել էր Ամոնիոսին, որ ակներև Եւտոկիոսին ժամանա-  
կակից Հերմիասի որդի նորագոտոնական մեկնիչն է: Այս  
Ամոնիոսը մեր ձեռքը հասած՝ Պորփիրի Ներածութեան  
հնագոյն մեկնութեան հեղինակն է և P. Tannery նրան  
համարում է նաև թուարան<sup>1)</sup>, ուստի և վստահութեամբ  
կարելի է հետեցնել, որ Ամոնիոս նորագոտոնական մեկ-  
նիչը Եւտոկիոս Ասկարնացու ուսուցիչն է և Եւտոկիոսի  
Ներածութեան մեկնութեան ամենամօտ ազդիւրն անշուշտ  
պէտք է համարել իւր ուսուցչի Աղեքսանդրիայում աւան-  
դած դասախօսութիւնները:

Իսկ եթէ մեր այս հետեւութիւնն ուղիղ է՝ պարզ է որ  
Ամոնիոսի աշակերտ՝ Ե-Ձ դարի մեկնիչ Եւտոկիոսին յիշող  
նորագոտոնական Դաւիթն ինքը Զ-րդ դարի մատենագիր  
պէտք է լինի:

Բացի այդ Դաւիթ մեկնիչի խնդիրը ստանում է նաև  
մի ուրիշ հետաքրքրական լուսաբանութիւն: Ինչպէս յայտ-  
նի է, Հերմիասի որդի Ամոնիոսը կրտսեր Ոլիմպիոդորոս  
փիլիսոփայի ուսուցիչն է եղել: Թէև Ամոնիոսը Պրոկլի  
աշակերտներից էր և իւր սկզբնական կրթութիւնը ստացել  
էր Աթէնքում, բայց նա յետոյ դասախօսում էր Աղեք-  
սանդրիայում: Ահա այս շրջանում աշակերտել են նրա մօտ  
Աղեքսանդրիայում կրտսեր Ոլիմպիոդորոսը և Եւտոկիոսը,  
և ինքնըստինքեան հասկանալի է, որ կրտսեր Ոլիմպիոդո-  
րոս փիլիսոփայի աշակերտ Դաւիթն ամենից շուտ Ամոնեան  
շրջանի մեկնիչներին ծանօթ պիտի լինէր և նոյն իսկ նոցանից  
շատերին անձամբ տեսած էր, այնպէս որ բացատրում է  
Դաւիթի յիշատակած մեկնիչների գաղտնիքը: Դոքա բոլորն  
էլ Դաւիթին գրելով ժամանակակից Աղեքսանդրեան դպրոցի

1) Տես S. Günther, Abriss., էջ 245.



նորպղատոնական մեկնիչներ են: Իսկ միւս կողմից Աթէնքի Ե-Ձ դարի յայտնի և ակնաւոր նորպղատոնական իմաստասէրներից և ոչ մէկի անունը և յիշատակութիւնը չենք գտնում Դաւիթ մեկնիչի երկերում: Միթէ այս ուշագրաւ հանգամանքը պատահական պէտք է համարել: Իհարկէ ոչ Դաւիթ Աղեքսանդրիայի մեկնիչներից է, մօտ ծանօթ իւր շրջանի աղեքսանդրեան մեկնիչներին, Աթէնքում բնաւ չէ եղել և այդ մասին հայկական մատենագրական աւանդութիւնը յետագայ դարերում ստեղծուած առասպել է: Ահա այս է, իմ կարծիքով՝ նորպղատոնական Դաւթի մասին ամենահաւանական հեռուութիւնը, որ ստացւում է նրա երկերի ներքին բովանդակութեան ուսումնասիրութիւնից:

Վերլուծականքի մեկնութեան մէջ յիշուող (էջ 564, Վենետ. 1833) Աղեքսանդրոս մեկնիչը նոյնպէս Դաւթի շրջանի Աղեքսանդրեան դպրոցի մեկնիչներից պէտք է լինի: «Եւտոկիոս սկիզբն առնելով յիշատակութեանն Պորփիրի ներածութեանցն ինդրէ, իսկ Աղեքսանդրոս զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն լաւազոյն քան զնա արար» սողերից պարզ հեռուում է, որ այս Աղեքսանդրոսը չէ կարող Աղեքսանդրոս Ափրոզիսեցին լինել: «Զառաջիկայս յիշատակելով զիրողութիւն» բառացի թարգմանութիւն է մօտաւորապէս յունարէն («τῆ προσχειμένη» μνήσας πραγματείας) խօսքերի և «իրողութիւն» = πραγματεία (tractatio) բառով ակնարկւում է Եւտոկիոսի ներածութեան մասին աշխատութիւնը, որին ծանօթ է եղել Աղեքսանդրոս մեկնիչը: Դանի որ Եւտոկիոս Ասկարնացին Դաւթի ուսուցիչ կրտսեր Ոլիմպիոզորոսին ժամանակակից մեկնիչներից է՝ ուրեմն Եւտոկիոսի աշխատութիւնից օգտուող Աղեքսանդրոսն աւելի կրտսեր մեկնիչ է և նորպղատոնական Դաւթին ժամանակակից: Այս բոլոր մեկնիչները ժամանակով իրար այնքան մօտ են, որ միեւնոյն տեղի և միեւնոյն շրջանի մեկնիչներ միայն կարող են լինել: Ձ-րդ դարի սկզբի Աթէնքի մեկնիչները գրեթէ բոլորն էլ յայտնի են և նոցա շարքում Աղեքսանդրոս անունով մեկնիչ չէ յիշուած: Իրա պատճառն

իհարկէ այն է, որ Աղեքսանդրոս մեկնիչն էլ, ինչպէս և Ամոնիոսը, Եւտոկիոսը, կրտսեր Ոլիմպիոզորոսը, Հելիասը և Դաւիթը՝ Աղեքսանդրեան խմբի մեկնիչներ են:

Վերլուծականքի մեկնութեան է պրակում, ինչպէս վերևում նկատեցինք, կայ նաև Ամոնիոս մեկնիչի յիշատակութիւնը (էջ 574, Վենետ. 1833), բայց սրա մասին բացայայտ որևէ ցուցում չկայ, որով կարողանայինք այս մեկնիչին աւելի մօտ որոշել: Միայն թէ աչքի առաջ ունենալով, որ կրտսեր Ոլիմպիոզորոսը և հաւանաբար նաև Եւտոկիոս Ասկարնացին Հերմիասի որդու՝ Ամոնիոսի մօտ Աղեքսանդրիայում աշակերտ են եղել՝ կարելի է ենթադրաբար հաւանականագոյն համարել, որ Աղեքսանդրեան խմբի Ոլիմպիոզորոս փիլիսոփայի աշակերտ Դաւիթն աւելի շուտ այս Ամոնիոսի երկերին ծանօթ պիտի լինէր, քան թէ նոյն անունը կրող Աթէնքի հնագոյն միւս մեկնիչների: Ամոնիոսի անձնաւորութեան որոշումը մեր եզրակացութեան համար այլևս այնքան էլ կարևոր չէ, որովհետև առանց այդ էլ մեր վերոյիշեալ հեռուութիւններից երեւում է, որ նորպղատոնական Դաւթին Աթէնքում ուսում առած Ե-րդ դարի մեկնիչ չէ կարելի ընդունել:

Սահմանք Իմաստասիրութեան երկի և ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնների հայերէն բնագրի հետազօտութեամբ, ինչպէս տեսանք, հաստատում է բիւզանդագէտների այն ուշագրաւ նկատողութիւնը, որ Դաւիթ մեկնիչը կրտսեր Ոլիմպիոզորոս փիլիսոփայի աշակերտ և ուրեմն Ձ-րդ դարի մատենագիր է:

Նորպղատոնական Դաւթի մասին այս հեռուութիւնն առիթ է տալիս մեզ մի ընդհանուր գիտողութիւն անելու: Իմ կարծիքով, Աղեքսանդրիան խիստ մեծ չափով նպաստել է Հայոց մատենագրութեան զարգացման, և ընդհանուր առմամբ Արևելքի գիտական կետրոններն են գլխաւորապէս Հայոց մատենագրութեան անունը աւուզ alma mater-ը, իսկ Արևմուտքի դերն այդ տեսակետից չափազանցած է: Պիտոյից դրբի հեղինակն է Aphthonios, որ Աղեքսանդրեան հոետոր է, Մովսէս Խորենացուն վերագրուած Աշխարհագրու-



թեան բուն աղբիւրն է Աղեքսանդրեան Պապպոսի աշխատութիւնը, նոննոսը կամ աւեի ճիշտ կեղծ-Նոննոսը նոյնպէս Զ-րդ դարի Աղեքսանդրեան շրջանի մատենագիրներից պիտի լինի, շուտով հրատարակելու ենք Hermes trismegistos-ի մի հատուած, որի ծագումն ևս Աղեքսանդրիայից է, նորպատոնական Դաւիթը նոյնպէս Զ-րդ դարի Աղեքսանդրեան դպրոցի մեկնիչ է՝—պարզ է որ Աղեքսանդրիայի դերը Հայոց մատենագրութեան վերաբերմամբ շատ մեծ պէտք է համարել:

§9. Նորպատոնական Դաւիթ մեկնիչը fehusnեայ է.

Քանի որ Դաւիթ մեկնիչը և Դաւիթ Հարքացին, ինչպէս ենթադրում էինք, տարբեր անձնաւորութիւններ են, և հետևաբար Դաւթի մասին ընդունելութիւն գտած հայկական մատենագրական աւանդութիւնները կորցնում են իրանց նշանակութիւնը և յամենայն դէպս չեն վերաբերում նորպատոնական Դաւթին՝—բնականաբար կարող է հարց ծագել, թէ արդեօք նորպատոնական մեկնիչ Դաւիթը քրիստոնեայ էր թէ ոչ: Դաւթի հետ Ուրմպիոսոսի մօտ աշակերտող էլիաս մեկնիչի մասին հաղորդւում է, որ նա իւր մեկնական երկը գրելու ժամանակ գեռ ևս քրիստոնեայ չէր<sup>1)</sup>: Արդ՝ արդեօք կան բաւարար հիմքեր ընդունելու, որ Սահմանք Իմաստասիրութեան երկի և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնների հեղինակը քրիստոնեայ էր: Իմ կարծիքով, այդ հարցին կարելի է տալ դրական պատասխան:

Որ նորպատոնական Դաւիթը քրիստոնեայ է՝ այդ ամենից առաջ երևում է նրա Դաւիթ անունից: Իսկ մեկնիչի անունն անպայման Դաւիթ է եղել, որովհետեւ թէ յունարէն բնագրերն ունեն *ἀπὸ φωνῆς Δαβὶδ* վերնագիրը և թէ Հայոց մատենագրութեան մէջ ըստ երևոյթին մեկնիչի

1) K. Krumbacher, GBL, zw. Aufl., էջ 432.

Դաւիթ անունն է եղել նրան Դաւիթ Հարքացու հետ շփոթելու պատճառներից մէկը:

Յունաց մատենագրական աւանդութիւնն նորպատոնական Դաւթին համարել է քրիստոնեայ, որովհետեւ Սահմանք Իմաստասիրութեան երկի յունարէնի վերնագիրն է՝ *Τὰ προλεγόμενα τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλοτάτου καὶ θεόφρονος φιλοσόφου*: Սակայն ի նկատի առնելով, որ մեկնիչ Դաւիթը յունական շրջանում ևս շփոթուած է եղել Niketas David Paphlagon-ի հետ՝ թերևս առարկեն մեզ, որ «*θεοφιλοτάτου καὶ θεόφρονος*» մակդիրները չեն վերաբերում իսկական Դաւթին:

Սակայն յունարէն այս վերնագրից և մեկնիչի Դաւիթ անունից անկախ՝ կան և ուրիշ աւելի հաստատուն նշաններ, որոնք ապացուցանում են Դաւիթ մեկնիչի քրիստոնեայ լինելը: Ինչպէս արդէն տեսանք (§4), Սահմանք Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները բաժանուած են պրակների և այդ պրակների «Հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակը (կամ տեսութիւն)» վերնագրերն անպայման հեղինակինն են: Արդ՝ ակներև է որ շարունակ կրկնուող «Հանդերձ Աստուծով և առաջիկայ պրակը» խօսքերը կարող են հեղինակի քրիստոնեայ լինելու նշաններ համարուել:

Սահմանք Իմաստասիրութեան երկում էջ 188 (Վեներտիկ 1833) գտնուում է հետևեալ հետաքրքրական հատուածը. «Արդ այսպէս և Աթենա Կոյս լսի. վասն զի ասէին արտաքինքն զԱթենայէ, եթէ ի գլխոյն Արամազդայ ծնաւ»: «Արտաքինքն» բառով Դաւիթ մեկնիչն այստեղ ակնարկում է երևի հեթանոս մատենագիրներին: Միև կողմից «արտաքինքն» յոյն հեղինակների վերաբերմամբ դործածուած լինելով, թերևս կարելի լինի այդ՝ մեկնիչ Դաւթի արևելցի ծագման մի նշան համարել. ուստի և անհիմն չի լինի ենթադրել, որ Դաւիթ մեկնիչը Զ-րդ դարի քրիստոնեայ և ոչ յոյն մատենագիրներից է, ինչպէս և Իրիգոր Աստուածաբանի ճառերի՝ Նոննոս անունով յայտնի մեկնիչը:



§10. Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը Դաւիթ մեկնիչը չէ.

Նոննոսի հրատարակութեան առաջաբանում<sup>1)</sup> մատնանիշ էի արել, որ էջմիածնի մատենադարանի Թ. 1775 (=Կար. Յուլյ. Թ. 1733) և 1808 (=Կար. Յուլյ. Թ. 1765) Ձեռագրերը Գրիգոր Աստուածաբանի հինգ ճառերի առասպելաբանական մեկնութիւնների հեղինակ համարում են Դաւիթ Անյաղթ փիլիսոփային: Թ. 1775 Ձ-րում Թ.ր. 150b գտնուում է հետեւեալ վերնագիրը. «Գիրքս իմաստասիրաց արտաքնոց առասպելաբանութեան արարեալ Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի»: Այս վերնագիրը թէև Ձ-րի գրչինը չէ և դրուած է Ձ-րի յետևի կողմ վրայ՝ բայց գրութիւնը հին է: Իսկ թ. 1808 Ձ-րը պարունակում է Նոննոսից միայն Ա-1 գլուխ, որ ընտրութեամբ ծաղկաքաղ է արել Յովսէփ գրիչը, և ծաղկաքաղի վերջում գտնուում է Յովսէփ գրչի հետեւեալ յիշատակարանը. «Ձայս քանի մի առաջնոց հեթանոսաց առասպելական պատմութէ, զոր արարեալ է Դաւիթ յանյաղթ փիլիսոփայի և ես պիտակ և վրիպակ Յովսէփս զպիտանացուն ընտրեցի և ծրեալ եղի ի վերջ գրգիս...» (Թ.ր. 340b):

Ձեռագրերի հարորդած այս տեղեկութիւնն ուշագրութեան արժանի էր, որովհետև հաստատ կերպով դեռ որչափ չէ, թէ արդեօք յիշեալ առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը արքայ Նոննոսն է, թէ մի ուրիշը: Բանասէր և բիւզանդագէտ Էդվին Պատցիգ, որ մասնագիտօրէն քննել է Նոննոսին վերագրուած բազմաթիւ յունարէն Ձեռագրեր և ըստ կարելոյն լուսաբանել է այդ մեկնութիւնների յօրինման ժամանակի և հեղինակի անձնաւորութեան վերաբերեալ խնդիրները՝ ցոյց է տալիս

որ միմիայն տասերորդ դարից սկսած յիշոււմ է Նոննոսն իբրև մեկնութիւնների հեղինակ, իսկ տասերորդ դարից առաջ թէև բազմաթիւ մատենագիրներ օգտուել են առասպելաբանական մեկնութիւններից, բայց հեղինակի անունը չեն յիշոււմ, իսկ Թ-երորդ դարում Tzetzes մատենագիրը նոյն մեկնութիւնները վերագրել է ոմն Մաքսիմոսին<sup>2)</sup>: Էդվին Պատցիգ սրամիտ և հիմնաւոր փաստերով մատնանիշ է անում, որ Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկնութիւնները դրուած են իմաստասիրական հեթանոս դպրոցների փակոււմից առաջ՝ Ձ-րդ դարի սկզբում. իսկ մեկնութիւնների հեղինակի մասին կարծում է, որ անպայման արևելցի և հաւանօրէն ասորի քրիստոնեաներից է, ինչպէս և Մալալասը<sup>2)</sup>:

Ի նկատի առնելով Էդվին Պատցիգի այդ հետևութիւնները՝ միանգամայն կարելի էր հնարաւոր համարել, որ Ձ-րդ դարի քրիստոնեայ և հաւանաբար արևելցի մեկնիչ Դաւիթը յօրինած լինէր Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկնութիւնները, ինչպէս այդ վկայում են էջմիածնի Թ. 1775 և 1808 Ձեռագրերը: Սակայն Նոննոսի և մեկնի Դաւիթի երկերի ներքին բովանդակութեան հետազոտուած թիւնից երևաց, որ առասպելաբանական մեկնութիւններէ հեղինակը և նորպատոնական Դաւիթն անպայման տարբեր անձնաւորութիւններ են:

Սահմանք իմաստասիրութեան երկի և առասպելաբանական մեկնութիւնների հեղինակները, ինչպէս կտեսնենք, խօսում են յաճախ միևնոյն առասպելաբանական և իմաստասիրական նիւթերի մասին, սակայն նոցա պատմածներն ու բացատրութիւնները երբեմն բովանդակութեամբ այնքան զանազանուում են իրարից, որ ակներև տարբեր անձնաւորութիւններից պէտք է յօրինուած լինեն: Բովանդակութեան տարբերութեանն անշուշտ աւելի մեծ կարևորութիւն պէտք է տալ, քան լեզուական պատահական

1) Տե՛ս (Nonnos) Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz. Marburg 1903. էջ 2. կամ նոյնը՝ Zeitschrift für armenische Philologie, Erster Band, էջ 221.

2) Տե՛ս Dr. Edwin Patzig, De Nonnianis in IV orationes Gregorii Nazianzeni commentariis. Leipzig 1890, էջ 24—26.  
2) Տե՛ս E. Patzig, de Nonnianis..., էջ 26—30:



նմանութիւններին: Սակայն պէտք է ի նկատի առնել և այն, որ վերայիշեալ երկերի հայերէն թարգմանութեան մէջ լեզուական առանձնայատկութիւնները որոշ նշանակութիւն ունեն թարգմանութեան վերաբերեալ խնդիրները լուսաբանելու համար: Արդ՝ դէմ առ դէմ դնենք Սահմանք Իմաստասիրութեան երկի և առասպելաբանական մեկնութիւններէ նման հատուածները, որպէս զի փաստօրէն ցոյց տանք այդ հատուածների տարբեր հեղինակներից յօրինուած լինելը: Լեզուական նմանութիւնները մենք ընդ գծել ենք, թէև այդ նմանութիւնները համարում ենք միանգամայն պատահական: Բայց իհարկէ համոզուած ենք, որ լեզուական աննշան և պատահական նմանութիւններից լուրջ հետևութիւններ անող բանասէրները կաշխատեն այլ կերպ մեկնել այն, ինչ որ մենք պատահական ենք ընդունում:

Սահմանք Իմաստ. էջ 134<sup>1)</sup> Նոննոս IV, ԼԳ, էջ 77 [296]<sup>2)</sup>.  
«Եւ պարտ է գիտել եթէ որք առասպելաբանեն ասեն, թէ Պոռմիթեա գողացաւ երբեմն յԱստուածոցն հոր՝ և շնորհեաց մարդկան. որ է այլաբանութիւն»:

«Պոռմիթեա այս ասի, թէ գողացաւ զհոր յաստուածոցն և շնորհեաց մարդկան, և եթէ ի միս զհորն պատրեաց զԱրամազդ, և ի բարկութիւն շարժեաց զնա կրկին»:

Սահմ. Իմաստաս. էջ 164 Նոննոս III, ԺԶ, էջ 31 [250].  
«Եւ պարտ է գիտել, եթէ ոմն Կղեմքոտոս ամուսկիացի կործելով, եթէ Պղատոն զբնաւորական մահուանէն հրամայէ խօկալ զինքն ի պարսպէն, որպէս

1) Տես «Վորին վարդապետի, Մամբէի վերձանողի և Դաւթի Անյապթի մասենազրութիւնք». Վենետիկ 1833.  
2) Անկիւնաւոր փախազծում գրուած թուերով նշանակում ենք Հայագիտութեան Հանգէի էջերը. հատոր I, Մարբուրգ 1903.

Իմաստասիրին, ընկեցեալ զի հոգին ելեալ՝ բաժանեսցի ի մարմնոյն»:

Սահմ. Իմաստ. էջ 166 Նոննոս III, ԺԸ, էջ 32 [251].  
«Արպէս և արար պիթագորուհին Տիմիքտայ, որ կոչեցաւ թէ-անուխ: Քանզի նա անկեալ ի բունն սիկիլացւոց բռնաւորին, և հարցեալ թէ ընդէր ոչ ուտեն պիթագորականքն զմեծ ոլոռունս, ասէր՝ Կերայց քան թէ առացից: Եւ յասել բռնաւորին, թէ կեր, ասէր, Ասացից քան թէ կերայց. և այնպէս ծամելով զլեզուն վախճանեցաւ»:

Կինս այս Թէանով ի բռնաւորէ ըմբռնեալ՝ հարկաւորի ասել զանճառելիան հայրենիս. իսկ նա զլեզուն ծամեալ ի բաց եթուք, ոչ կամելով ի հարկէ ինչ ասել բռնաւորին, ի բաց խլելով գործարանին ձայնականիս»:

Սահմ. Իմաստաս. էջ 188 Նոննոս I, Դ, էջ 7 [226].  
«Արդ այսպէս և Աթենա կոյս լսի. վասն զի ասէին արտաքինքն զԱթենայէ՝ եթէ ի զլխոյն Արամազդայ ծնաւ»:

... քանզի ասի թէ Աթենա ի զլխոյն Արամազդայ ծնաւ»:

Սահմ. Իմաստաս. էջ 194 Նոննոս II, ԺԶ, էջ 21 [240].  
«Ջորս առակելով քերթութիւնն վասն Ոտոսի և Եփիաղոտոսի, որք զՌաս զլեառն ի վերայ Ողմմիտոսի յօժարեցան դնել, և ի վերայ Ռայ զտերեաշարժն Բիդովն, որպէս զի երկին ճեմարան եղիցի»:

«Սա [Սողոն] ունէր որդիս երկուս, աւաջնոյն՝ Ովտոս անուն և երկրորդին՝ Եփիաղտէս... Արդ՝ զՌփս ի վերայ Աթովի խորհեցան դնել և նորաք յերկինս ելաներ»:

Սահմ. Իմաստաս. էջ 210 Նոննոս III, ԿԸ, էջ 55 [274].  
«Իսկ ի քաղաքականութեանն «Պղատոն իմաստասէր շա-



զանազան է գիտաւորութիւն  
և շարագրութիւն և մակա-  
գրութիւն. վասն զի Պղատոն  
եզակի մակագրեաց՝ Զքաղա-  
քականութիւն. իսկ Արիստո-  
տէլէս յոքնակի՝ Զքաղաքա-  
կանութիւնը. վասն որոյ և  
գիտաւորութիւնն զանազան  
գոյ. քանզի Արիստոտէլ  
ասէ, թէ զիւրդ քաղաքավա-  
րեցան առաջինքն. այս ինքն  
Արգիացիք և Բիովտացիք, և  
այլք ամենայն Յոյնք. իսկ  
Պղատոնն ասէ, թէ զիւրդ  
պարտ է քաղաքավարել»:

րագրեաց շարագրութիւն,  
զոր և քաղաքավարութիւնս  
մակագրեաց: Յայսմ շարա-  
գրութեան ասէ, թէ որպիսի  
պարտ է լինել քաղաքին և  
կամ յորքան արանց շարա-  
կայիչ, կամ որովք բարոյիւք  
կամ աւրինաւք քաղաքա-  
վարիչ: Այլ այնպիսի քաղաք  
բանիւ միայն եղև նմա բաղ-  
կացեալ և ոչ գործով, նաև  
ոչ քաղաքավարեալ...»

Հմտ. նաև Սահմ. Իմաստա. էջ 199 և Նոննոս I,  
ԺԶ, էջ 11 [230]. III, ԿԳ, էջ 51 [270].

Դաւիթ մեկնիչի և Նոննոսի՝) այս հատուածներում  
աչքի են ընկնում բովանդակութեան հետեւեալ տարբե-  
րութիւնները:

Ըստ Դաւիթի պիթագորուհի Թէանովին հարցնում է  
Սիկիլացոց բռնաւորը թէ «ընդ՞ որ ուտեն պիթագորա-  
կանքն զմեծ ուրոռնս», իսկ ըստ Նոննոսի բռնաւորը ստի-  
պում է Թէանովին «ասել զանճառելիան հայրենիս»: Նոր-  
պղատոնական Դաւիթի ասելով Թէանով չկամենալով պա-  
տասխանել բռնաւորի հարցին՝ «ճամելով զլեզուն վախճա-  
նեցաւ», իսկ ըստ Նոննոսի՝ «զլեզուն ծամնալ ի բաց կթուք  
... ի բաց խլելով գործարանին ձայնականի»:

Ոտոսի և Եփիազտէսի մասին մեկնիչ Դաւիթը պատ-  
մում է, որ նորա «գՈսա զլեառն ի վերայ Ողիւմպիոսի յօ-  
ժարեցան զնել, եւ ի վերայ Ոսայ գտերուաշարժն Բիրովի,

1) Նոննոս անուրբ գործ ենք ածում միայն որոշ յարմարութեան  
համար թէև առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը կարող է  
և մի ուրիշը լինել, ինչպէս այդ ճիշտ նկատել է Էգվին Պատցիգ:

որպէս զի երկին ծեմարան եղիցի». իսկ Նոննոսը բորբո-  
վին այլ կերպ է պատմում նոյնը. «Արդ զՈվս ի վերայ Ա-  
թովի խորհեցան զնել եւ նորունք յերկինս ելանել»:

Նորպղատոնական Դաւիթը հմտորէն բացատրում է,  
թէ ինչո՞ւ քաղաքականութեան վերաբերեալ Պղատոնի և  
Արիստոտէլի գրուածքների վերնագրերը տարբեր են —  
«Պղատոն եզակի մակագրեաց՝ Զքաղաքականութիւն [=Սո-  
լիտեա]. իսկ Արիստոտէլէս յոքնակի՝ Զքաղաքականութիւնը  
[=Սոլիտեա]». բայց Նոննոս այդ նրբութիւնը չգիտէ և  
գրում է՝ «Պղատոն իմաստասէր շարագրեաց շարագրութիւն,  
զոր և քաղաքավարութիւնս մակագրեաց»: Այս  
հատուածներում ուշագրաւ է նաև այն, որ Սոլիտեա բառը  
Սահմ. Իմաստ. երկում թարգմանուած է քաղաքականու-  
թիւն, իսկ առասպելաբանական մեկնութիւններում՝ քա-  
ղաքավարութիւն:

Իմ կարծիքով աւելի քան անհաւանական է, որ մի-  
ևնոյն հեղինակը միևնոյն նիւթը պատմէ և մեկնէ այնքան  
տարբեր կերպով, ինչպէս վերոյիշեալ հատուածներում, և  
հետեւաբար՝ առասպելաբանական մեկնութիւնների հեղի-  
նակը մեկնիչ Դաւիթը չէ:

Նոննոսին վերագրուած մեկնութիւնների բովանդա-  
կութեան հետազօտո թեամբ նոյն այդ հետեւութիւնը հաս-  
տատում է նաև այլ փաստերով: Առասպելաբանական  
մեկնութիւնների հեղինակը, որ իւր աշխատութիւնը գրել  
է իմաստասիրական հեթանոս դպրոցների փակումից առաջ՝  
ըստ երևոյթին իմաստասիրական խնդիրներում օգտուել է  
ժամանակակից նորպղատոնական մեկնիչների երկերից,  
սակայն իմաստասիրական հարցերում ինքը ոչ հմուտ մաս-  
նագէտ է, ոչ էլ նորպղատոնական, ինչպէս Դաւիթը: Որ  
նորպղատոնական մեկնիչների երկերը առասպելաբանական  
մեկնութիւնների հեղինակին ծառայել են իբրև աղբիւր՝  
այդ բոլորովին հաստատ է, որովհետև ինքը հեղինակը  
խոստովանում է այդ. այսպէս օրինակ՝ Նոննոս III, ԻԳ,  
էջ 34 [253] — «Իսկ արդ մեկնիչքն Պղատոնի այսպէս աս-  
են...», կամ Նոննոս III, ԻԷ, էջ 37 [256] — «Իսկ արդ



այժմիկ մեկնողքն իմաստասիրացն ասեն» ևն: Միւս կողմից՝ առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը չէ կարող նորպղատոնական համարուել, և այդ երևում է Պղատոնի ագահութեան մասին նրա պատմածից. «Այլ ասէ աստուածայինն Գրիգորիոս, թէ վասն այսորիկ չոգաւ Պղատոնի Սիկիդիայ, զի վայելեացէ պատուականութեամբն ճաշողն Դիոֆիստայ: Եւ ստուգէ զասացեալսդ վաճառիկն նորա . . .»<sup>1)</sup> Իմ կարծիքով, եթէ առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը նորպղատոնական լինէր՝ դժուար թէ համաձայնէր, որ Պղատոն Դիոֆիստի մօտ էր գնացել նրա ճաշերը վայելելու համար: Այդ մեկնութիւնը դժուար թէ Պղատոնին յարգողների շրջանում հաւանութիւն գտնէր, և նորպղատոնականները նոյն նոննոսի վկայութեամբ այլ կերպ էին բացատրում իրանց ուսուցչի Սիկիլիա գնալը— «մի՛ զի պատմագրեացէ զհօւրն որ յԵփեսոս ելանէ, և մ'ւս՝ զի հաւանեցուցէ զԴիոֆիստոս իմաստասիրելը»<sup>2)</sup>:

Ինչ թւում է, որ վերոյիշեալ առարկութիւններն աչքի առաջ ունենալով կարելի է հաստատ կերպով եզրակացնել, որ Էջմիածնի Թ. 1775 Ձ-րի «Գիրքս իմաստասիրաց արտաքնոց առասպելաբանութե արարեալ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի» վերնագիրը, ինչպէս և Էջմիածնի Թ. 1808 Ձ-րի յիշատակարանում գտնուող այն տեղեկութիւնը, որ Դաւթի Անյաղթն է առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը՝ անհիմն և միանգամայն սխալ պէտք է համարել: Իսկ եթէ այդ այդպէս է, ուրեմն և ուրիշ դէպքերում ևս կասկածանքով պէտք է վերաբերուել ձեռագրական այն վերնագրերին, որոնց համաձայն այս կամ այն գրուածքը վերագրում են Դաւթի Անյաղթ փիլիսոփային:

1) Տես Նոննոս, III, ԻԳ, էջ 34—35 [253—254].

2) Տես Նոննոս էջ 34 [253]:



## Բովանդակութիւն

	Էջ.
§ 1. Դաւթի մասին նախկին հետազոտութիւնները . . . . .	3
§ 2. Պ. Կոնիբերի կարծիքը . . . . .	3
§ 3. Բանասիրական ուսումնասիրութեան մը եղանակով կարելի է հաստատուն եզրակացութիւններ ստանալ . . . . .	5
§ 4. Սահմանք Իմաստասիրութեան, Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը և Արիստոտէլի Վերլուծականքի մեկնութեան հաստուածը միեւնոյն հեղինակի՝ Դաւթի փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» և «Ստորոգութեանց» հայերէն մեկնութիւնները Դաւթինը չեն . . . . .	5
§ 5. Դաւթի իմաստասիրական կրկերը . . . . .	9
§ 6. Զանազան կարծիքներ Դաւթի անձի մասին և դոցա քննութիւնը 13	13
§ 7. Սահմանք Իմաստասիրութեան երկը և Ներածութեան ու Վերլուծականքի մեկնութիւնները թարգմանուած են յունարէնից 17	17
§ 8. Նորպղատոնական Դաւթի մեկնիչը Աղեքսանդրիայում ուսած Ջ-րդ դարի մատենագիր է . . . . .	20
§ 9. Նորպղատոնական Դաւթի մեկնիչը քրիստոնեոյ է . . . . .	30
§ 10. Նոննոսին վերագրուած առասպելաբանական մեկնութիւնների հեղինակը Դաւթի մեկնիչը չէ . . . . .	32









«Ազգային գրադարան»



NL0145152



